


ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՂԹԻ՛Ր ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ. «ԲԱԺԱՆԻՐ ԵՎ ՏԻՐԻՐ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Ռազմավարություն տասնյոթերորդ)

Երբ տեսնում եք հակառակորդին, մի՛ սարսափեք: Սպառնալի տեսքից սարսափելու փոխարեն, փորձեք ուսումնասիրել թվացյալ ամբողջության բաղադրիչները:

Բաժանելով մասերի, սերմանելով տարաձայնություններ և ներքին հակասություններ, դուք կկարողանաք թուլացնել և հաղթահարել հակառակորդին, որը ձեզանից շատ ավելի հզոր է ուժով: Պլանավորելով հարձակումը, մշակեք ձեր հակառակորդներին, «լվացեք» նրանց ուղեղները, հրահրեք կոնֆլիկտ իրենց շարքերում: Ուսումնասիրեք կապերն ու միակցությունները, այն ամենը, ինչը մարդկանց միավորում է կոլեկտիվի մեջ կամ մի խումբ կապում է մյուսի հետ: Բաժանումը թուլացնում է, իսկ միացման տեղերը ամենաթույլ մասն են ցանկացած կառուցվածքում: Հակառակորդի կամ ցանկացած դժվարության հետ առերեսվելիս մեծ խնդիրը վերածեք մի քանի փոքր խնդիրների, որոնց նկատմամբ հաղթանակը միանշանակ հնարավոր է:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԻՐՔ

Մ.թ. ա. 490 թվականի օգոստոսի մի առավոտ Աթենքում լուրեր տարածվեցին, որ քաղաքից քսանչորս մղոն հյուսիս պարսկական հսկայական նավատորմ է մոտեցել Մարաթոնի ափամերձ հարթավայրերին: Քաղաքի վրա շփոթություն և անհանգստություն էր կախված, մարդիկ զգում էին, որ Աթենքը դատապարտված է: Աթենացիներից ոչ մեկի համար պարսիկների մտադրությունները գաղտնիք չէին՝ նվաճել իրենց քաղաքը, ոչնչացնել երիտասարդ ժողովրդավարությունը և վերականգնել գահին վերջերս տապալված բռնակալ Հիփիոս Աթենացուն, ստրկության վաճառել Աթենքի շատ ու շատ բնակիչների: Դրանից ութ տարի առաջ Աթենքը ուղարկել էր իր նավերը՝ օգնելու Փոքր Ասիայի հունական քաղաքներին, որոնք ապստամբել էին Պարսից կայսրության տիրակալ Դարեհի դեմ: Սակայն աթենացիները բավականին շուտ վերադարձան տուն. առաջին մարտերից հետո պարզ դարձավ, որ ապստամբությունը դատապարտված է ձախողման: Այնուամենայնիվ, նրանք մասնակցեցին Սարդիս քաղաքի հրկիզմանը, որը հիմնահատակ այրվեց, և Դարեհը ծարավ էր վրեժ լուծելու այս անպատշաճ արարքի համար:

Թվում էր, թե կանխորոշված Աթենքի ճակատագիրը: Պարսիկների բանակը հսկայական էր՝ ավելի քան 80 հազար մարդ հարյուրավոր նավերի վրա: Նրանք ունեին գերազանց հեծելազոր և աշխարհի լավագույն նետաձիգներ: Մինչդեռ աթենացիներն ունեին միայն հետևակ՝ մոտ 10 հազար մարտիկ: Անմիջապես սուրհանդակ ուղարկվեց Սպարտա՝ օգնության խնդրանքով, բայց խնդիրն այն էր, որ սպարտացիները տոնակատարություններ էին անցկացնում, որոնց ընթացքում խստիվ արգելված էր մասնակցել ռազմական գործողություններին: Նրանք խոստացան զորքեր ուղարկել հնարավորինս շուտ, ոչ ուշ, քան մեկ շաբաթ անց: Բայց այդ ժամանակ կարող էր շատ ուշ լինել: Աթենացիների մեջ կային նաև այնպիսիները, հիմնականում հարուստ տոհմերի ներկայացուցիչներ, ովքեր համակրում էին պարսիկներին, զզվում էին ժողովրդավարությունից և երազում էին Հիփիուսի վերադարձի մասին: Այս խմբավորումը քայքայիչ աշխատանք էր տանում ներսից՝ դժգոհություն սերմանելով քաղաքացիների շրջանում: Այսպիսով, Աթենքը պարզապես ստիպված չէր ինքնուրույն պայքարել պարսիկների դեմ, առանց դաշնակիցների օգնության, բնակչությունն ինքնին բաժանված էր տարբեր քաղաքական խմբակցությունների:

Դեմոկրատական Աթենքի առաջնորդները հավաքվեցին քննարկելու ստեղծված իրավիճակը: Առաջարկվող բոլոր տարբերակները անհեթեթ էին: Մեծամասնությունը կողմ էր քաղաքի շուրջ պաշտպանական պարսպների ներսում զորքեր տեղակայելուն և պարսիկների ժամանմանը սպասելուն, ապա մարտնչելու հայրենի հողի վրա: Սակայն պարսկական բանակն այնքան մեծ էր, որ կարող էր քաղաքը շրջապատել ոչ միայն ցամաքով, այլև ծովով՝ բլոկադայի ենթարկելով Աթենքը: Սակայն, աթենացիներից մեկը՝ Միլտիադես Կրտսերը, առաջարկեց բոլորովին այլ տարբերակ: Ամբողջ աթենական բանակը պետք է շարժվեր դեպի Մարաթոն, որտեղ ճանապարհը անցնում էր նեղ լեռնային կիրճով: Ճիշտ է, սա Աթենքին անպաշտպան կթողներ, քանի որ մինչ հույները կփորձեին ցամաքով կասեցնել պարսիկների առաջխաղացումը, անպաշտպան պետք է թողնեին քաղաքը ծովից: Սակայն Միլտիադեսը շարունակում էր պնդել իր առաջարկը: Կիրճը գրավելով, նա համոզված էր, որ քաղաքը կարող է պաշտպանվել շրջափակումից և բլոկադայից: Նա կռվել էր

պարսիկների դեմ Փոքր Ասիայում և իրավամբ համարվում էր աթենացի ամենափորձառու հրամանատարներից մեկը: Ժողովը քվեարկեց նրա պլանի օգտին:

Մի քանի օր անց տասը հազար աթենացի հետևակայիններ շարժվեցին դեպի հյուսիս: Զորքին հետևում էին ծանր զրահներով ստրուկները, ջորիներն ու ավանակները՝ պարենով բեռնված: Երբ նրանք մոտեցան Մարաթոնի հովտին նայող լեռնանցքին, նրանց ստերում վհատություն առաջացավ: Ափի երկայնքով ձգվող երկար ցամաքային շերտում, որքան աչքը կարող էր տեսնել, ծածկված էր անթիվ վրաններով, որոնց շուրջը դեսուդեն էին շարժվում Պարսկական կայսրության զինվորները, իսկ ափամերձ ջրերում խռնված էին նավերը:

Մի քանի օր շարունակ կողմերից ոչ մեկը որևէ գործողություն չձեռնարկեց: Աթենացիները ստիպված էին պաշտպանել իրենց դիրքերը գրեթե առանց հեծելազորի, որը անհույսորեն թվաքանակով զիջում էր հակառակորդին: Արդյոք կարո՞ղ էին նրանք սկսել ճակատամարտը Մարաթոնի մոտ: Եթե աթենացիները կարողանային ժամանակ շահել, ապա կարող էին հույս դնել Սպարտայից եկող օգնական ուժերի վրա: Ժամանակն իսկապես հույների կողմն էր: Բայց ինչի՞ էին սպասում պարսիկները:

Օգոստոսի 12-ի լուսաբացին, մի քանի հույն հետախույզներ, որոնք իբր ծառայում էին պարսիկական բանակում, ցնցող լուրերով գաղտագողի անցան Աթենքի ճամբար: Հենց նոր մթության քողի տակ պարսկական նավատորմը շարժվեց դեպի Ֆալերոնի ծոց՝ Աթենքի մոտ: Պարսիկներն իրենց հետ տարան գրեթե ամբողջ հեծելազորը՝ հովտում թողնելով միայն տասնհինգ հազարանոց ջոկատ: Նրանք մտադիր էին ծովից հարձակվել Աթենքի վրա: Այնուհետև շարժվել դեպի հյուսիս և հունական բանակը երկու կողմից սեղմել կիճում:

Տասնմեկ աթենացի զորավարներից միայն Միլտիադեսը մնաց հանգիստ և զուսպ: Նա հայտարարեց, որ սա հնարավորություն է, որը մենք պետք է օգտագործենք: Մինչև արևածագը նա հորդորեց մյուսներին, որպեսզի անհապաղ հարձակվեն պարսիկների վրա: Մյուս զորավարները առարկեցին՝ հիմավորելով, որ նույնիսկ թշնամու մնացած այս ուժը դեռևս թվաքանակով գերազանցում է նրանց. պարսիկներն ունեին հեծելազոր և բազմաթիվ նետաձիգներ: Ավելի լավ է սպասել սպարտացիներին՝ նրանք շուտով կժամանեն: Սակայն Միլտիադեսը հակադարձեց. պարսիկները բաժանել էին իրենց ուժերը: Նա նախկինում կռվել էր նրանց դեմ և գիտեր, որ հույն հետևակը գերազանցում էր նրանց կարգապահությամբ և ավելի լավ էր կռվում: Ընդսմին, Մարաթոնում պարսիկները թվաքանակով այնքան էլ չէին գերազանցում հույներին: Ուստի աթենացիները պետք է հարձակվեին նրանց վրա և պարտության մատնեին:

Բացի այդ, պարսկական նավերին, նույնիսկ համընթաց քամու դեպքում, առնվազն տասից տասներկու ժամ կպահանջվեր ափը շրջանցելու և Ֆալերոն հասնելու համար: Զիավորներին ափ իջեցնելու համար նույնպես որոշ ժամանակ կպահանջվեր: Եթե աթենացիները չեն հապաղում և արագորեն հաղթում են Մարաթոնում մնացած պարսիկներին, ապա հնարավոր էր ժամանակ շահել նույն օրը վերադառնալու Աթենք և սպառազինված դիմավորելու հակառակորդին: Եթե նրանք հապաղեն և սկսեն երկար ու ձիգ մտածել, գործը դատապարտված էր ձախողման: Սպարտացիները կարող են չհասցնել, իսկ պարսիկները այդ ընթացքում կշրջապատեին բանակը, և հաշվի առնելով դավաճան հույների կողմնակիցների հանգամանքը, կարող էին հակառակորդին ներս թողնել քաղաք, և դա ամենավտանգավորն էր: Պետք է անհապաղ գործել՝ հիմա կամ երբեք: Հինգ հրամանատար-

ներ դեմ արտահայտվեցին այս պլանին, վեցը աջակցեցին Միլտիադեսին, այնպես որ, մեկ ձայնի առավելությամբ, որոշում կայացվեց հարձակվել լուսաբացին:

Առավոտյան ժամը վեցին մոտ աթենացիները սկսեցին հարձակումը: Չնայած պարսիկ նետաձիգների նետեր տեղատարափին, նրանք արագ հասան ճամբարին և ճակատամարտը վերածվեց ձեռնամարտի, և, ինչպես Միլտիադեսը կանխատեսել էր, հույները գերազանցեցին ձեռնամարտում: Նրանք պարսիկներին ստիպեցին նահանջել դեպի հովտի հյուսիս, որտեղ սկսվում էր ճահիճները: Հազարավոր պարսիկ զինվորներ իրենց մահկանացուն կնքեցին այնտեղ: Ջուրը կարմիր էր արյունից: Առավոտյան ժամը իննի մոտ ամեն ինչ ավարտվել էր: Աթենացիները կորցրել էին երկու հարյուրից պակաս զինվոր:

Այժմ աթենացիները, որքան էլ հոգնել էին, ստիպված էին յոթ ժամվա ընթացքում զգալի ճանապարհ անցնել՝ քսանչորս մղոն դեպի իրենց հայրենի քաղաքը, որպեսզի ժամանակին հասնեն այնտեղ և կանգնեցնեն պարսիկներին: Նրանք պարզապես հանգստանալու ժամանակ չունեին, և նրանք վազում էին, վազում էին ամբողջ ուժով, ծանր զրահով և զենքով: Նրանց առաջնորդում էր այն միտքը, թե ինչ վտանգի են ենթարկված Աթենքում իրենց հարազատներն ու մտերիմները :

Առավոտյան ժամը չորսին մարտիկներից ամենաարագները հասան այն վայրը, որտեղից կարելի էր տեսնել Ֆալերոնի ծոցը: Շուտով մյուսները նույնպես մոտեցան: Նրանք հասցրին ճիշտ ժամանակին: Մեկ ժամ էլ չանցավ, երբ Պարսից նավերը հայտնվեցին ծոցում: Հազարավոր աթենացի մարտիկներ, ծածկված փոշու կեղևով և չորացած արյունով, ուս-ուսի կանգնած էին ափին՝ պատրաստ հակահարված տալու:

Պարսիկները մի քանի ժամ խարիսխված մնացին, ապա շրջվեցին և ուղղվեցին դեպի բաց ծով: Աթենքը փրկվեց:

Մեկմաբանում

Մարաթոնի հաղթանակը և դեպի Աթենք մրցավազքը, թերևս, կարելի է անվանել հին Հունաստանի պատմության ամենալարված պահերից մեկը: Եթե հունական բանակը ժամանակին չհասներ, պարսիկները կգրավեին քաղաքը, իսկ հետո ամբողջ Հունաստանը՝ ի վերջո տարածվելով ամբողջ Միջերկրական ծովում, քանի որ այդ ժամանակ գոյություն չուներ հակադիր ուժ, որը կարող էր կանգնեցնել նրանց: Պատմությունը կարող էր ընթանալ բոլորովին այլ ճանապարհով:

Միլտիադեսի պլանը, չնայած այն պետք է շտապ իրականացվեր ժամանակի խիստ սղության պայմաններում, հիմնված էր հավերժական և անփոփոխ սկզբունքների վրա: Հակառակորդը շատ ավելի ուժեղ է, քան դուք, սպառնալով ձեզ, ստիպելով կասկածել ձեր հարձակման անցնելու և նախաձեռնությունը վերձնելու ձեր կարողության վրա: Դուք պետք է փորձեյիք ստիպել նրան տարանջատվել, մասնատել նրան ուժերը, ապա մեկ առ մեկ հաղթել առանձին ստորաբաժանումներին՝ ոչնչացնելով դրանք մաս առ մաս:

Միլտիադեսի ռազմավարության առանցքային կետը Մարաթոնում պայքարի մեջ մտնելու որոշումն էր: Զորքերը տեղակայելով լեռնային կիրճում՝ նա ընտրեց կենտրոնական դիրք՝ հարավային ծայրամասում մնալու փոխարեն: Եթե պարսիկները շարժվեին կիրճով, ապա նրանց սպասվում էր արյունալի պայքար մի ամբողջ բանակի դեմ, որը պաշտպանության էր անցել: Ուստի, նրանք որոշեցին տարանջատվել՝ հունական զորքերը շրջապատելու նպատակով, մինչև Սպարտայից օգնական ուժերը կհասանեին վերջիններիս: Տարանջատվելով և ծովով հեծելազոր ուղարկելով

նրանք կորցրեցին և իրենց առավելությունը, և բարենպաստ դիրքը, որը կարող էր հաղթանակ ապահովել պատերազմում։

Աթենացիների համար կարևոր էր նախ հաղթել Մարաթոնում մնացած ավելի, համեմատաբար, «փոքրաթիվ» ուժերին։ Դա անելով և պահպանելով իրենց կենտրոնական դիրքը՝ նրանք օգտվեցին մեկ այլ առավելությունից՝ Աթենք տանող կարճ ճանապարհից, և առաջ շարժվեցին դրանով, մինչդեռ ներխուժողները ընտրեցին առավել երկար՝ շրջանցիկ ծովային ճանապարհը։ Հասնելով Ֆալերոն՝ աթենացիները պարսիկներին ոչ մի հնարավորություն չթողեցին իրենց զորքերը անվտանգ ափ իջեցնելու։ Պարսիկները կարող էին վերադառնալ Մարաթոն, բայց հյուսիսից ժամանած արյունոտ աթենացի զինվորների տեսքը վկայում էր այնտեղի ճակատամարտում պարտության մասին՝ ստիպելով նրանց տատանվել։ Նահանջը դարձավ նրանց միակ տարբերակը։

Կյանքում ամեն ինչ կարող է պատահել, և դուք կարող եք հանդիպել հզոր հակառակորդի՝ վճռական հակառակորդի, որը պատրաստ է ոչնչացնել ձեզ, կամ անհաղթահարելի խոչընդոտների և խնդիրների մի լեռան, որոնք թվում են անհնար հաղթահարել։ Բնական է, որ նման իրավիճակում կաթվածահար անող վախը կարող է ձեզ ճնշել՝ ստիպելով հանձնվել կամ հետաձգել՝ սպասելով որևէ լուծման։ Բայց պատերազմի օրենքն այն է, որ եթե թույլ տաք հզոր և միաձույլ բանակի մոտենալը ձեզ, ձեր հնարավորությունները կնվազեն։

Մեծ և հզոր բանակը, եթե ժամանակին չձեռնարկեք գործողություններ և թույլ տաք, որ այն չափազանց մոտենա, կարող է անդիմադրելի հարված հասցնել։ Մինչև դա գիտակցեք, դուք լիովին պարտություն կկրեք։ Նման իրավիճակում ամենախելացի բանը ռիսկի դիմելն է, հակառակորդին դիմակայել նախքան նա կհասցնի հարձակվել, և փորձել չեզոքացնել նրա հարձակման ուժը՝ ստիպելով նրան բաժանվել խորամանկությամբ կամ ուժով։ Եվ հակառակորդին բաժանելու լավագույն միջոցը կենտրոնը գրավելն է։

Պատկերացրեք ճակատամարտ կամ կոնֆլիկտ՝ շախմատի տախտակի վրա խաղաքարերի տեսքով։ Շախմատի տախտակի կենտրոնը կարող է լինել ֆիզիկական, նյութական՝ իրական տեղանք, ինչպես Մարաթոնի դեպքում, կամ ավելի նուրբ բան հոգեբանության ոլորտից, օրինակ, թիմում իշխանության լծակներ կամ ամենակարևոր դաշնակցի աջակցություն։ Զբաղեցրեք տախտակի կեսը, և հակառակորդը ստիպված կլինի իր ուժերը բաժանել մասերի՝ փորձելով շրջապատել ձեզ կամ հարվածել մի քանի ուղղություններով։ Այժմ այս փոքր մասերի հետ գործ ունենալը շատ ավելի հեշտ կլինի։ Դուք կարող եք մեկ առ մեկ ջախջախել դրանք, ստիպել նրանց նահանջել կամ բաժանվել նույնիսկ ավելի փոքր մասերի։ Եթե մի ամբողջություն բաժանվի, այն կորցնում է կայունությունը, և այս գործընթացը կարող է շարունակվել այնքան ժամանակ, քանի դեռ ամեն ինչ չի լուծվել ամենափոքր մասնիկների մեջ։

> Երբ ձեր բանակը հանդիպում է հակառակորդին, և նա թվում է հզոր, փորձեք հարձակվել նրա վրա մեկ տեղում։ Եթե հարձակումը հաջող է, տեղափոխվեք հաջորդ վայր և հարվածեք այնտեղ, և այդպես շարունակ, կարծես թե ճանապարհորդում եք ոլորապտույտ ճանապարհով։
>
> Միյամոտո Մուսաշի (մոտ 1584–1645)

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Հարյուր հազարավոր տարիներ առաջ մեր նախնիները մեծապես տառապել են սեփական թուլության և անապահովության զգացումից: Այդ թշնամական և անբարյացակամ աշխարհում կենդանիներին օգնում էին գոյատևել և կենդանի մնալ համապատասխան գույնը կամ արագ վազելու ունակությունը: Բացի այդ, նրանց պաշտպանում էին սուր ժանիքներն ու ճանկերը, իսկ հաստ մորթին փրկում էր ձմռան ցրտից: Այդպիսի պաշտպանիչ միջոցներից զրկված արարածների համար, ինչպիսին էր օրինակ մարդը, ավելի դժվար էր գոյատևել, դիմակայել բոլոր կողմերից մոտեցող սպառնալիքներին և վտանգներին, հատկապես, երբ միայնակ էին: Փրկության միակ հույս ը՝ իր տեսակի հետ խմբավորվել էր:

Խմբում՝ լինի դա ընտանիք, տոհմ, ցեղ, ավելի հեշտ էր հակահարված տալ գիշատիչին, և հնարավոր էր ավելի արդյունավետ որս անել: Ի վերջո, եթե նրանք ձեր կողքին էին, ապա թույլ չէին տա ձեր վրա թիկունքից հարձակվել: Խմբերն ավելի մեծացան, և հնարավոր դարձավ կիրառել և կատարելագործել մարդկության մեծ գյուտը՝ աշխատանքի բաժանումը, որը թույլ տվեց խմբի որոշ անդամների ազատել ամենօրյա քրտնաջան աշխատանքից՝ հանապազօրյա հաց ստանալու համար, որպեսզի նրանք կարողանան ավելի շատ ժամանակ և էներգիա ծախսել այլ պարտականությունների կատարմանը, որոնք պահանջում էին հատուկ հմտություններ: Այս տարբեր դերերը թույլ էին տալիս ավելի արդյունավետ օգտագործել ժամանակը և ուժերը, աջակցել միմյանց, և արդյունքում ամբողջ խումբը, որպես ամբողջություն, ուժեղացավ:

Դարերի և հազարամյակների ընթացքում մարդկանց խմբերը մեծացան, նրանց կառուցվածքը դարձավ ավելի բարդ և բազմազան: Սովորելով ապրել բնակավայրերում, այնուհետև քաղաքներում՝ մարդիկ հայտնաբերեցին, որ կարող են խուսափել անխուսափելի վտանգներից և դժվարություններից: Կոլեկտիվում ապրելը նաև ապահովում էր հոգեբանական պաշտպանության ավելի նուրբ ձևեր: Ժամանակի ընթացքում մարդիկ սկսեցին մոռանալ այն վախերի մասին, որոնք մի ժամանակ նրանց դրդել էին ցեղեր միություններ կազմելը: Միայն մեկ մարդկային կոլեկտիվում՝ բանակում, այդ նախնադարյան սարսափը մնաց այնքան հզոր, որքան երբևէ:

Հին ժամանակներում պատերազմ վարելու ստանդարտը և ընդհանուր ընդունված ձևը ձեռնամարտն էր՝ արյունալի դրամա, որի մասնակիցները անընդհատ բախվում էին մահվան հետ ոչ միայն դեմ առ դեմ, այլև թիկունքից գաղտագողի մոտեցումից, բոլոր կողմերից սպառնալիքից: Այդ ժամանակից ի վեր ռազմական ղեկավարները սովորեցին զինվորներին դասավորել ամուր փակ շարքերում՝ ձախ և աջ թևերում զգալով իր զինակիցների արմունկը, հավատալով, որ նրանք չեն փախչի, թողնելով նրանց վտանգի առջև, և զինվորը կարող էր վստահորեն և անվախորեն դուրս գալ թշնամուն ընդառաջ: Հռոմեացիները մշակեցին այս ռազմավարությունը՝ առաջին շարքերում ընդգրկելով երիտասարդ և անփորձ զինվորներին, իսկ առավել փորձված և համարձակ մարտիկներին՝ հետևից, ապա մեջտեղում, նրանց միջև, դասավորեցին բոլորին: Սա նշանակում էր, որ ամենաթույլերը, նրանք, ովքեր ավելի հավանական է, որ խուճապի մատնվեին, շրջապատված էին վստահելի և փորձառու զինվորներով՝ պահպանելով և սերմանելով վստահության զգացում: Այդ օրերին հռոմեական լեգեոններից ավելի համախմբված բանակ չկար:

Ուսումնասիրելով պատերազմի պատմությունը 19 - րդ դարի հայտնի ռազմական գրող Արդան դյու Պիկը խոսել է մի անսովոր երևույթի մասին. որոշ առավել հայտնի մարտեր (օրինակ՝ Հաննիբալի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ Կաննի ճակատամարտում կամ Հուլիոս Կեսարի հաղթանակը Գնեոս Պոմպեոսի նկատմամբ Ֆարսալի ճակատամարտում) աչքի էին ընկնում, թե որքան անհամաչափ են երկու կողմերի կորուստները՝ մի քանի հարյուր հաղթող կողմից և հազարավոր պարտվողների կողմից: Դյու Պիկը բացատրում է, որ դա տեղի է ունենում այն դեպքում, երբ ռազմավարական մանևրի շնորհիվ հաղթող բանակին հաջողվում է անակնկալի բերել հակառակորդին և ջարդել նրա համախմբված շարքերը: Տեսնելով, որ շուրջը ամեն ինչ փլուզվում է, կորցնելով վստահության և աջակցության զգացումը և մնացածից կտրված զգալով՝ զինվորները խուճապի էին մատնվում, զենքը գցում ու փախչում, իսկ հակառակորդին թիկունքը ցույց տված զինվորը դառնում է հեշտ թիրախ: Հազարավոր ու հազարավոր մարդիկ հենց այդպես էլ ոչնչացվեցին: Ստացվում է, որ այդ փառահեղ հաղթանակները, ըստ էության, հոգեբանական հաղթանակներ էին: Հաննիբալի բանակը Կաննում շատ ավելի փոքրաթիվ էր, քան հակառակորդը: Բայց հռոմեացիները անպաշտպան զգալով ստիպված էին դողալ և նահանջել:

Այս երեւույթը ժամանակից դուրս է. զինվորը, ով զգում է, որ կորցնում է իր կողքի կանգնողների աջակցությունը, պատում է անհանդուրժելի պարզունակ սարսափ: Նա վախենում է մենակ մնալ մահվան առջև: Շատ մեծ զորահրամանատարներ հմտորեն այս սարսափը ռազմավարության են վերածել: Չինգիզ խանը վարպետ էր դրանում: Օգտագործելով իր հեծելազորի անհավատալի շարժունակությունը, նա կտրում էր հակառակորդի կապը, մեկուսացնելով նրա բանակը առանձին ստորաբաժանումների՝ ստիպելով նրանց զգալ անպաշտպան, լքված: Նա միտումնավոր և նպատակասլացորեն սարսափ էր սերմանում: Ի թիվս շատ ուրիշների, բաժանման և մեկուսացման ռազմավարությունը շատ արդյունավետ էին կիրառում Նապոլեոնն ու Մաո Ցզեդունը (իր պարտիզանական ջոկատներով):

Մեր բնությունը չի փոխվել հազարամյակների ընթացքում: Նույնիսկ ամենաժամանակակից և քաղաքակիրթ մարդկանց մեջ հոգու խորքում թաքնված է միայնակ, առանց աջակցության, անհայտ վտանգի առջև մնալու նույն հնագույն վախը: Այսօր, տարբեր պատճառներով, մարդիկ ավելի ու ավելի են տարանջատվում, մեր միջև չկա նախկին համախմբվածությունը, բայց դրանից մեր հասարակության և ընկերների աջակցության կարիքը միայն ուժեղանում է: Մեզ համար կարևոր է գիտակցել աջակցությունն ու պաշտպանությունը: Զրկեք մեզ այս զգացողությունից, և այն անմիջապես կփոխարինվի սեփական թուլության և անապահովության գիտակցությունից սարսափի պարզունակ զգացումով: Տարանջատման և մեկուսացման ռազմավարությունը երբեք այնքան արդյունավետ չի եղել, որքան այսօր. թշնամուն առանձնացրեք թիմից, խմբից՝ ստիպեք նրան զգալ օտարություն, մենակություն, անապահովություն, և դուք կզրկեք նրան ուժից: Թուլության այս պահը ձեզ հիանալի հնարավորություն է տալիս նրան անկյուն գցել, Այնուհետև կամ գայթակղել, կամ սարսափեցնել, որպեսզի նա ընդունի իր պարտությունը:

1960-ականներին Մաո Ցզեդունի ամենահավատարիմ և նվիրված դաշնակիցներից մեկը նրա պաշտպանության նախարար Լին Բյաոն էր: Ոչ ոք այնքան չէր գովաբանում կամ շողոքորթում չինացի առաջնորդին, որքան Լինը: Այնուամենայնիվ, 1970 թվականին Մաոն կասկածում էր, որ շողոքորթությունը պարզապես իրական մտադրությունները թաքցնելու միջոց էր: Լինը երազում էր նրան հաջորդելու մասին:

Լինի՝ որպես պաշտպանության նախարարի պաշտոնը նրան հատկապես վտանգավոր էր դարձնում, քանի որ նա վերահսկում էր ռազմական բոլոր լծակները և բանակի հետ բոլոր կապերը։

Մաոն գործում էր մեծ զգուշությամբ։ Հրապարակայնորեն նա շարունակում էր Լին Բյաոյին վերաբերվել որպես իր ամենամտերիմ ընկերոջ և համախոհի, հստակեցնելով, որ նրան տեսնում է որպես իր իրավահաջորդ։ Սա հանգստացրեց դավադիրին և ժամանակավորապես մեղմացրեց նրա կասկածները։ Միևնույն ժամանակ, սակայն, Մաոն պաշտոնանկ արեց բանակում Լին Բյաոյի ամենաազդեցիկ կողմնակիցներից մի քանիսին, որոնք որոշ չափով արմատական հայացքներ ունեին և շատ հարցերում մի փոքր ձախակողմյան էին։ Մաոն համոզեց նրան անել ռազմական բարեփոխումների մի քանի ծայրահեղ առաջարկներ (նա լավ գիտեր, որ այդ առաջարկները կհանդիպեն գեներալների ծայրահեղ դժգոհությանը)։ Լին Բյաոյի աջակցությունը ռազմական շրջանակներում տատանվեց։

Ժամանակի ընթացքում Լին Բյաոն բացահայտեց Մաոյի մանևրները, բայց արդեն ուշ էր։ Նա կորցրել էր իր հիմնական հենարանը։ Շփոթված և վախեցած՝ նա սկսեց պետական հեղաշրջում պլանավորել, բայց այս հուսահատ ձեռնարկումը դատապարտված էր ձախողման։ Ինչ վերաբերում է Մաոյին, սա միայն նրա օգտին էր։ 1971 թվականին Լին Բյաոն զոհվեց ինքնաթիռի վթարի հետևանքով՝ խիստ կասկածելի հանգամանքներում։ Մաոն լավ գիտեր, որ քաղաքական գործիչներն ավելի շատ են կախված իրենց կապերից, քան սեփական տաղանդներից։ Այդպիսի աշխարհում քչերն են հարաբերություններ պահպանում մեկի հետ, որի կարիերան տատանվում է. նրանք անմիջապես շրջվում են։ Եվ երբ մարդիկ իրենց մեկուսացված են զգում, հաճախ կորցնում են իրենց հանգստությունը և դիմում հուսահատ գործողությունների, որոնք, խնդիրը լուծելու փոխարեն, միայն սրում են այն։ Հետևաբար, Մաոն ձգտում էր Լին Բյաոյի մեջ ստեղծել այն զգացողությունը, որ բոլորը լքել են իրեն։ Իր նախարարի վրա բացահայտ հարձակումը կհանգեցներ երկարատև և խառնաշփոթ պայքարի, որում նրանք կարող էին ներքաշվել։ Սակայն Լին Բյաոյին զրկելով այն քաղաքական աջակցությունից, որի վրա նա հույսը դրել էր, և ցույց տալով, որ իր հակառակորդը թուլանում է, նա շատ ավելինի հասավ։

Նախքան ձեր մրցակիցների դեմ առճակատման գնալը, փորձեք նախ թուլացնել նրանց՝ պառակտում մտցնելով նրանց շարքերում՝ հնարավորինս շատ տարաձայնություններ առաջացնելով համախոհների միջև։ Լավ արդյունքների կարելի է հասնել ղեկավարության և ենթակաների միջև սեպ խրելով՝ կարևոր չէ նրանք զինվորներ են, թե քաղաքացիական անձինք։ Առաջնորդները լավ չեն կարողանում ղեկավարել, երբ կորցնում են իրենց ժողովրդի աջակցությունը։ Այսպիսով, աշխատեք դրա վրա։ Համոզվեք, որ ուրիշների աչքում նրանք ավտորիտար կամ ոչ կոմպետենտ տեսք ունեն։ Կարելի է հետևել հանրապետական նախագահ Ռիչարդ Նիքսոնի օրինակին, ով 1972 թվականին իր կողմը թեքեց «կապույտ օձիքավորներին»՝ արտադրական աշխատողներին, որոնք ավանդաբար աջակցում էին դեմոկրատներին։ Դրանով նա պառակտեց այն ամուր հիմքը, որի վրա կանգնած էր դեմոկրատական կուսակցությունը։ (Այդ ժամանակից ի վեր, պետք է ասել, սա դարձել է հանրապետականների սիրելի քայլը։) Հիշեք, որ ձեր թշնամին պետք է ցնցվի, գոնե ինչ-որ տեղ ճեղք տա, այն կընդլայնվի և կհանգեցնի պառակտման։

Մ.թ.ա. 338 թվականին Հռոմը ջախջախեց իր անհաշտ թշնամուն՝ Լատինական միությանը՝ իտալական քաղաքների կոնֆեդերացիային, որոնք միավորվել էին Հռոմի ընդլայնումը կանխելու համար։ Սակայն այս հաղթանակից հետո հռոմեացիները

բախվեցին լուրջ խնդրի՝ ինչպես կառավարել իրենց նոր նվաճված տարածքները: Արդյո՞ք նրանք պետք է ոչնչացնեին Լատինական լիգայի անդամներին: Բայց դա կստեղծեր իշխանության վակում տարածաշրջանում, և ապագայում ի հայտ եկող ցանկացած նոր թշնամի կներկայացներ ավելի մեծ սպառնալիք: Արդյո՞ք նրանք պարզապես պետք է կլանեին միության մաս կազմող քաղաքները: Այդ դեպքում նրանք պետք է ստանձնեին այնպիսի հսկայական տարածքների կառավարման և վերահսկման պատասխանատվությունը, որ Հռոմի իշխանությունն ու հեղինակությունը պարզապես կվերանար:

Հռոմեացիների կողմից հետագայում հասած լուծումը հայտնի դարձավ որպես divide et impera («բաժանիր և տիրիր») սկզբունքը: Այս ռազմավարությունը օգնեց նրանց ստեղծել հզոր կայսրություն: Նրանք, ըստ էության, ոչնչացրին միությունը, բայց դա արեցին նրա տարբեր բաղադրիչների նկատմամբ հավասար վերաբերմունքից հեռու: Դրա փոխարեն, հռոմեացիները մշակեցին մի համակարգ, որի համաձայն նախկին Լատինական միության որոշ քաղաքներ դարձան Հռոմի մաս, որպեսզի նրանց բնակիչները վայելեին Հռոմի քաղաքացիության բոլոր արտոնությունները: Մյուս քաղաքները զրկվեցին զգալի տարածքից, բայց փոխարենը ստացան գրեթե լիակատար անկախություն: Մյուսները բաժանվեցին ավելի փոքր միավորների և վերածվեցին գաղութների, որոնք խիտ բնակեցված էին հռոմեացիներով: Քաղաքներից ոչ մեկը բավարար իշխանություն չստացավ Հռոմին մարտահրավեր նետելու համար, որը պահպանեց իր կենտրոնական գերիշխանությունը (իզուր չէ, որ ասում են. «Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ»):

Այս ամբողջ համակարգում գլխավորն այն էր, որ եթե անկախ քաղաքն ապացուցեր իր հավատարմությունը Հռոմին, օրինակ՝ պատերազմում էր Հռոմի կողքին, նա հնարավորություն էր ստանում դառնալ կայսրության մաս: Առանձին քաղաքներն այժմ ավելի շատ օգուտ էին տեսնում Հռոմի բարեհաճությանը արժանանալու մեջ, քան նրա դեմ միավորվելու մեջ : Հռոմն առաջարկում էր պաշտպանություն, բարգավաճում, ուժ, մինչդեռ կայսրությունից բաժանվելը բոլոր առումներով վտանգավոր էր: Այսպիսով, պարզվեց, որ Լատինական միության երբեմնի հպարտ և անկախ անդամներն այժմ մրցում էին միմյանց հետ ՝ միաժամանակ փորձելով նվաճել Հռոմի բարեհաճությունը :

«Բաժանիր և տիրիր»-ը հզոր ռազմավարություն է ցանկացած խումբ կամ թիմ կառավարելու համար: Այն հիմնված է հետևյալ սկզբունքի վրա. ցանկացած մեծ խմբի կամ կազմակերպության անդամները անխուսափելիորեն բաժանվում են ավելի փոքր խմբերի և խմբակցությունների, որոնք ձևավորվում են նմանությունների և ընդհանուր շահերի հիման վրա: Այս խմբակցությունները կարող են բավականին հզոր լինել և, եթե չվերահսկվեն, կարող են խաթարել ամբողջ կազմակերպությունը: Խմբակցությունների և կուսակցությունների ձևավորումը ամենամեծ սպառնալիքն է առաջնորդի համար, քանի որ ժամանակի ընթացքում դրանք սկսում են հետապնդել իրենց սեփական շահերը, այլ ոչ թե այն ավելի մեծ խմբի շահերը, որին պատկանում են: «Բաժանիր և տիրիր»-ը այս խնդրի լուծումն է: Նախևառաջ, դուք պետք է հստակորեն սահմանեք ձեզ որպես իշխանության կենտրոն: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է հասկանա, որ ձեր բարեհաճությունը շահելը կարևոր է նրա համար: Այնուամենայնիվ, սա պահանջում է ավելին, քան պարզապես ձեզ որպես առաջնորդի հաճոյանալը: Այն պահանջում է ավելին՝ ամբողջ խմբի աջակցությունն ապահովելը:

Երբ Եղիսաբեթ I-ը 1588 թվականին բարձրացավ անգլիական գահ, Անգլիան ոչ մի կերպ չէր կարող կոչել մեկ ազգ: Երկիրը մասնատված էր, ֆեոդալական համա-

կարգից ժառանգություն մնացած բազմաթիվ ցեղային կալվածքների՝ կենտրոնների, որոնց միջև իշխանության համար պայքարը չէր դադարում: Եվ թագավորական արքունիքում իրավիճակն ամենևին էլ լավը չէր՝ խմբավորումների և խմբակցությունների զանգվածը, կռվում էր միմյանց դեմ : Եղիսաբեթի լուծումը ազնվականության թուլացումն էր՝ առանձին ընտանիքներին միմյանց դեմ հանելով: Միևնույն ժամանակ, նա վստահորեն ստանձնեց հիմնական դիրքը իրեն՝ թագուհուն, դարձնելով Անգլիայի խորհրդանիշ, կենտրոն, որի շուրջն էր ամեն ինչ պտտվում: Նա փորձեց փոխել իրավիճակը նաև արքունիքում՝ զգուշորեն ապահովելով, որ ոչ ոք, բացի, իհարկե, իրենից, չունենա իշխանության հասնելու հնարավորություն: Նկատելով, որ նախ Ռոբերտ Դադլին, ապա Էսեքսի կոմսը, չափազանց նախընտրելի էին դարձել, նա անմիջապես նրանց դրեց իրենց տեղում:

Ֆավորիտին նախապատվություն տալու գայթակղությունը հասկանալի է, բայց վտանգավոր: Ավելի լավ է ֆավորիտներին հերթով փոխարինել՝ թույլ տալով, որ յուրաքանչյուրը ժամանակ առ ժամանակ անկում ապրի: Ներգրավեք տարբեր տեսակետներ ունեցող մարդկանց և տվեք նրանց հնարավորություն պաշտպանելու դրանք՝ խրախուսելով նրանց: Դուք կարող եք սա ներկայացնել որպես ժողովրդավարության առողջ ձև, բայց վերջնական արդյունքը ձեր օգտին կլինի. մինչ ձեր ենթակաները պայքարում են լսվելու և հասկացվելու համար, դուք եք կառավարում:

Կա վտանգ, որ թիմի ներսում խմբավորումները աննկատ կհայտնվեն, օրինակ, եթե իրենց ոլորտի մասնագետները ձեր թիկունքում մնան՝ առանց ձեզ լիարժեք հաշվետվություն տալու իրենց արած ամեն ինչի մասին: Հիշե՛ք. յուրաքանչյուր մարդ տեսնում է ընդհանուր պատկերի միայն մի մասը, դուք պատասխանատու եք վերջնական արդյունքի համար: Եթե դուք պատասխանատու եք, ապա պետք է կենտրոնական դեր ստանձնեք: Ամեն ինչ պետք է հոսի ձեր միջով: Եթե տեղեկատվությունը պետք է թաքցվի, միայն դուք կարող եք դա անել: Սա «բաժանիր և տիրիր» սկզբունքն է: Եթե գործողության մի քանի մասնակիցներ չունեն ամբողջական տեղեկատվություն, նրանք անխուսափելիորեն կդիմեն ձեզ դրա համար: Խոսքը միկրոկառավարման մասին չէ, այլ բոլոր կարևոր դիրքերի նկատմամբ լիակատար վերահսկողություն պահպանելու և ձեր ծրագրերին խոչընդոտող պոտենցիալ «ապստամբներին» ցանկացած աջակցությունից զրկելու մասին է:

1950-ականների և 1960-ականների ընթացքում գեներալ-մայոր Էդվարդ Լանսդեյլը համարվում էր ԱՄՆ-ի անկարգությունները ճնշելու առաջատար մասնագետ: Ֆիլիպինների նախագահ Ռամոն Մագսայսայի համար նա մշակել էր մի ծրագիր, որով հաջողվեց հաղթահարել 1950-ականների սկզբին երկրում գործող կոմունիստական պարտիզանական Հուկբալախապ շարժումը: Ապստամբությունները ճնշելու համար պահանջվում էր խորամանկություն և ճարպկություն, այսինքն՝ ավելի շուտ քաղաքական գործչի, քան ռազմականի հմտություններ: Լանսդեյլի համար հաջողության գրավականն այն էր, որ նա նախ ոչնչացրեց կոռուպցիան պետական մակարդակով, այնուհետև իրականացրեց մի շարք հանրաճանաչ ծրագրեր և գործողություններ, որոնք նպաստեցին կառավարության նկատմամբ ժողովրդի վերաբերմունքի բարելավմանը: Դա հողը տարավ ապստամբների ոտքերի տակից՝ իմաստազրկելով նրանց հիմնական կարգախոսները:

Շարժումը մարում էր կորցնելով աջակցությունը և հայտնվելով մեկուսացման մեջ: Լանսդեյլը լիակատար խելագարություն էր համարում փորձել ուժային մեթոդներով դիմակայել նման ձախակողմյան ապստամբներին: Ուժի ցանկացած կիրառում նրանց միայն ձեռնտու էր՝ նահատակների իմիջ հաղորդելով և օգնելով

ստանալ ժողովրդի աջակցությունը: Ապստամբների համար ժողովրդից մեկուսանալը հավասարազոր է մահվան:

«Բաժանիր և տիրիր» ռազմավարությունը անգնահատելի է, երբ անհրաժեշտ է համոզել մարդկանց, ազդել նրանց վրա ոչ թե գործողություններով, այլ խոսքերով: Սկսեք նրանից, որ ձևացնեք, թե համաձայն եք ձեր հակառակորդների հետ՝ կիսվելով նրանց կարծիքով որոշակի հարցի շուրջ: Այս մանևրը արդյունավետորեն գրավում է նրանց կողմը: Այդտեղ հասնելուց հետո սկսեք կասկածի տակ դնել նրանց որոշ փաստարկներ՝ նրբորեն փոփոխելով դրանք և հանելով համատեքստից: Սա նրանցից ոմանց կստիպի կասկածել իրենց դիրքորոշման վրա և կարող է ներքին հակամարտություն հրահրել սիրելի գաղափարի կամ համոզմունքի շուրջ: Այս հակամարտությունը կթուլացնի հակառակորդին, կխաթարի նրանց վստահությունը և կբացի դուռը հետագա համոզման համար:

17 - րդ դարի Ճապոնիայի մարտարվեստի հայտնի վարպետ Միյամոտո Մուսաշին մշտապես գործ է ունեցել իր հետ հաշվեհարդար տեսնել ցանկացող հակառակորդների հետ: Հաճախ նրա վրա հարձակվել են ոչ թե մեկ առ մեկ, այլ մեծ խմբերով: Սպառազինված տղամարդկանց խմբի միայն տեսքը շատերին կստիպեր փախչել, կամ առնվազն անվճռականորեն կանգ առնել, ինչը մահացու սխալ է սամուրայի համար: Մյուս ծայրահեղությունը կլիներ հնարավորինս շատ թշնամիներ սպանելու համար շտապելը, այդ դեպքում հեշտ էր կորցնել իրավիճակի վերահսկողությունը: Մուսաշին, սակայն, նախ և առաջ ստրատեգ էր և որպես իսկական ստրատեգ նման անլուծելի թվացող իրավիճակներում գտնում էր ամենաօպտիմալ և ամենառացիոնալ լուծումները: Նա այնպիսի դիրք էր զբաղեցնում թևում, որ հակառակորդը ողջ անձնակազմով չկարողանար միաժամանակ հարձակվել իր վրա, ստիպելով նրանց մեկ առ մեկ մոտենալ: Այնուհետև, բաժանվելով առաջին մարտիկից, նա արագ շարժվում էր այն գծի երկայնքով, որի երկայնքով գտնվում էին մյուսները: Խուճապի մեջ ընկնելու կամ գլխիկոր մարտի նետվելու փոխարեն Մուսաշին, ասես, մասերի էր բաժանում հարձակվողներին: Հաջորդիվ, նա պետք է գործ ունենար առաջին մրցակցի հետ և տեղափոխվեր մարտական դիրք՝ երկրորդի հետ մենամարտելու համար՝ առանց թույլ տալու իրեն անհանգստանալ կամ մտածել մյուս հարձակվողների մասին: Արդյունքում, նա կազմակերպված էր և կենտրոնացած, իսկ նրա մրցակիցները նյարդայնանում էին, մինչ նա, շարժվելով գծի երկայնքով, մեկը մյուսի հետևից վերացնում էր հակառակորդին: Այժմ նրանք էին, այլ ոչ թե ինքն էր, վախ ու շփոթություն զգում:

Եթե դուք ճնշված եք բազմաթիվ փոքր խնդիրներով կամ, ընդհակառակը, բախվում եք մեկ հսկայական մարտահրավերի, կիրառեք Մուսաշիի մեթոդը: Եթե թույլ տաք ինքներդ ձեզ տատանվել իրավիճակի բարդության առջև և սկսեք երերալ կամ գլխիկոր շտապել, կկորցնեք ներքին վերահսկողությունը: Սա չի օգնի ձեզ, այն միայն կամրապնդի արդեն իսկ զգացած բացասական հույզերը: Նախ, բաժանեք առաջադրանքը փոքր կտորների՝ ձեզ դնելով կարևոր դիրքում, ապա շարժվեք գծի երկայնքով՝ մեկ առ մեկ վերացնելով ձեր խնդիրները: Հաճախ իմաստ ունի սկսել ամենափոքր և ամենաանշան առաջադրանքից՝ ամենադժվար և վտանգավորները թողնելով ավելի ուշ: Երբ լուծեք այս առաջին խնդիրը, կզգաք ուժի՝ ֆիզիկական և հոգեբանական, ալիք, որը կօգնի ձեզ հաղթահարել մնացածը:

Ամենակարևորը հարձակվել հակառակորդի վրա առանց հապաղելու, ինչպես դա արեցին աթենացի մարտիկները Մարաթոնի ժամանակ: Չի կարելի ձեռքերը ծա-

լած նստել: Ձեր անվճռականությունը միայն կքարդացնի առաջադրանքը, որը կարող է ճնշող դառնալ:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Նրանք, ովքեր հնում արդյունավետ պատերազմ էին մղում, գիտեին, թե ինչպես ապահովել, որ հակառակորդի առաջավոր և թիկունքային ստորաբաժանումները չհաղորդակցվեն միմյանց հետ, որ մեծ ու փոքր ստորաբաժանումները չաջակցեն միմյանց, որ ազնվականներն ու անարգները չօգնեն միմյանց, որ բարձր ու ցածր խավերը չմիանան միմյանց հետ: Նրանք գիտեին, թե ինչպես ապահովել, որ թշնամու զինվորները բաժանված լինեն միմյանցից և չկարողանան միավորվել, և որ նույնիսկ եթե բանակը միասնական լինի, այն համախմբված չլինի:

Սուն Ցզի (մ.թ.ա. 4-րդ դար)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Ուժերի տարանջատումը շարժունակության հասնելու արդյունավետ միջոց է: Այդպիսի ռազմավարությունը կարող է բավականին հզոր լինել: Նապոլեոնը դա հստակ ցույց տվեց՝ ստեղծելով կորպուսների շարժական համակարգ, որը զարմացրեց հակառակորդին իրենց հարձակումների անակնկալով և անկանխատեսելիությամբ: Սակայն այս համակարգը գործելու համար Նապոլեոնը ձգտում էր իր բոլոր ստորաբաժանումների լիակատար և կատարյալ համակարգմանը և բոլոր տեղաշարժերի նկատմամբ լիակատար վերահսկողությանը: Վերջնական արդյունքում նրա նպատակն էր միավորել բոլոր ստորաբաժանումները վճռական հարվածի համար: Պարտիզանական պատերազմում հրամանատարը նաև բաժանում է իր ուժերը փոքր, շարժական ստորաբաժանումների, որպեսզի դրանք ավելի դժվար լինի հայտնաբերել և գերի վերցնել, բայց նույնիսկ այստեղ առանձին ստորաբաժանումների միջև համակարգումը կարևոր է: Պարտիզանական պատերազմը չի կարող հաղթական լինել, եթե առանձին ստորաբաժանումները չեն կարողանում համակարգել իրենց գործողությունները: Ընդհանուր առմամբ, ձեր ուժերի ցանկացած տարանջատում պետք է լինի ժամանակավոր, կառավարելի և գործառնական:

Վերջապես, վերջին նշումը: Բաժանված աշխարհում իշխանության կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե ձեր սեփական խմբակցությունը միասնական և համախմբված է, իսկ ձեր միտքը՝ պարզ և կենտրոնացած ձեր նպատակներին հասնելու վրա: Կարող է թվալ, որ միասնության հասնելու լավագույն միջոցը բարձր ոգին և ոգևորությունը պահպանելն է: Դա կարևոր է, բայց բավարար չէ: Ոգևորությունը բնականաբար ժամանակի ընթացքում մարում է, ուստի եթե դուք սովորեք միայն դրա վրա հույս դնել, կձախողվեք: Բաժանման ուժերի դեմ շատ ավելի հզոր և հուսալի պաշտպանություն է գիտելիքն ու ռազմավարական մտածողությունը: Ոչ մի բանակ կամ խումբ չի կարող բաժանվել, եթե թշնամու մտադրությունները հայտնի են և հանդիպում են լավ մտածված և վճռական պատասխանի: Սեմյուել Ադամսը հայտնաբերեց և ցույց տվեց, որ ռազմավարությունը միակ հուսալի սուրն ու վահանն է:

Սկիզբը.

1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf
9) https://www.datocms-assets.com/63284/1766256811-stance_arm.pdf
10) https://www.datocms-assets.com/63284/1771097564-chin-strat-territory_arm.pdf
11) https://www.datocms-assets.com/63284/1775331518-battle-war_arm.pdf
12) https://www.datocms-assets.com/63284/1782499888-overwhelm-enemy_arm.pdf
13) https://www.datocms-assets.com/63284/1785403751-force strategy_arm -.pdf
14) https://www.datocms-assets.com/63284/1788601232-strike-point_arm.pdf

Աղբյուրը. https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi